

Ա. Ղաճալանյան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ Հ. ՊԱՐՈՆՅԱՆԻ
ԵՐԳԻԾԱՆՔԻ ՄԵՋ

1

Հ. Պարոնյանը XIX դարի այն ականավոր հայ դեմոկրատ և ռեալիստ հեղինակներից մեկն է, որոնց ստեղծագործությունը խորապես ներթված է ժողովրդի բառ ու բանի տարրերով: Պարոնյանի մոտ մենք գտնում ենք ժողովրդական հոմոթի ու սատիրայի արտահայտչական միջոցների և առհասարակ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունների, սյուժեների ու մոտիվների ստեղծագործական օգտագործման բազմաթիվ հիանալի օրինակներ: Մեծ երգիծաբանը միանգամայն գիտակցորեն ու նպատակադրված կերպով դիմել է աշխատավորական մասսաների բանավոր ստեղծագործությանը՝ ամենաժողովրդային ու ռեալիստական այդ արվեստի ակունքներին, իր երգիծանքին հասարակական և գեղարվեստական առավել հնչեղություն հաղորդող կարևոր նյութեր քաղելով այնտեղից: Այս տեսակետից ուշագրավ են այն մտքերը, որ, տարբեր առիթներով, արտահայտել է Պարոնյանն առակների մասին: Ժողովրդական բանահյուսության ամենամասսայական ու կարևոր այս ժանրի ստեղծագործությունների մեջ երգիծաբանի գնահատմանն է արժանացել հատկապես նրանց այլաբանական բնույթը, որով առակները մեծ հաջողությամբ դառնում են մարդկային-հասարակական կյանքի արատները մերկացնող ու ձաղկող կարևոր միջոցներ: Պարոնյանի կարծիքով՝ «Առակն մեծ դյուրություն կուտա երբեմն մեր կարծիքը հայտնելու: Մեր դիմացինը կաղնիի, կամ կովու, կամ ավանակի նմանեցնելով կրնանք համոզել առանց անոր անձնականության դպած ըլլալու, մինչդեռ եթե առանց առակի մեկուն կաղնի ըսելու ըլլանք՝ անոր անձնականությունը վիրավորած կըլլանք»¹: Պարոնյանը հատկապես ընդգծում է դաստիարակչական այն կարևոր նշանակությունը, որ ունի առակը մեծերի համար: Նա գրում է. «Առակն ընդհանրապես հրահանգիչ համարված է պզտիկ տղաներուն համար, և ես չեմ կարծեր, թե իբրև մանկավարժ չնկատվի մեծ տղաներու համար»²: Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրը, որն արժանացել է Պարոնյանի բարձր գնահատականին, դա՝ «նախնյաց խոսքերն» են կամ ժողովրդական առածներն ու ասացվածքները: Իր «Քաղաքավարության վնասները» գրվածքի գործող անձերից մեկի բերանով, խոսելով սիրո մեջ փոխադարձության հանգամանքի անհրաժեշտության մասին, Պարոնյանն ասում է. «... Սերը երկու կողմեն ըլլալու է, կրսեն նախնիք» և անմիջապես ավելացնում է՝ «Ա՛խ... այս նախնյաց խոսքերուն մեջ շատ աղվոր խոսքեր կան, մարգրիտի պես խոսքեր կան, բայց մենք չենք ճանչնար...»³:

¹ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 178:

² Նույն տեղում, հատ. V, էջ 5—6:

³ Նույն տեղում, հատ. I, էջ 162:

Առականների և առածների հետ միասին, որոնց հասարակական և գեղարվեստական արժանիքները հատկապես ընդգծված են Պարոնյանի կողմից, մեծ երգիծաբանը դրական կերպով է արտահայտվել ժողովրդական բանահյուսության մասին ընդհանրապես, նույնպիսի արժանիքներ տեսնելով նաև վերջինիս մյուս ժանրի ստեղծագործությունների մեջ: Մեր ասածի պերճախոս ապացույցներն են՝ Գ. Սրվանձտյանի «Համով-հոտով» և Հ. Ալլահվերդյանի «Ուլնիա կամ Ջեյթուն» վերնագրերով բանահյուսական-ազգագրական ժողովածուների լույս տեսնելու առթիվ Պարոնյանի գրած երկու գրախոսականները, որոնցով նա վեր է հանում հիշյալ ժողովածուների արժեքը, ջերմորեն հանձնարարելով դրանք ընթերցողների ու բանասերների ուշադրությանը: «Համով-հոտով»-ի մասին խոսելիս, Պարոնյանը՝ «Այգեստանի արժանի սոխակ», «Արժանի հեղինակ» է կոչում Գ. Սրվանձտյանին, նրա այս երկասիրությունը ևս նախորդների նման համարելով անտարակույս «ամեն ազգայնոց ընթերցման արժանի» գործ՝: Մոտավորապես նույնպիսի գնահատական է տրված Պարոնյանի կողմից նաև Ալլահվերդյանի ժողովածուին: «Սույն աշխատությունը,— գրել է նա,— կրնա «Համով-հոտով»-ի քույր համարվի», և ապա՝ «տարակույս շունինք, որ այս հրատարակությունն ևս ջերմ ընդունելություն պիտի գտնե ընթերցասեր և բանասեր ազգայիններն»²:

Նմանօրինակ կարծիք ունենալով ժողովրդական բանահյուսության մասին, Պարոնյանն իր գրվածքների մեջ մեծ հաջողությամբ օգտագործել է այդ բանահյուսության ինչպես արտահայտչական միջոցները, այնպես էլ նրա մի շարք սյուժեները, մոտիվները, առանձին մեծ ու փոքր ստեղծագործությունները:

Ժողովրդական բանահյուսությունը յուրովի նպաստել է Պարոնյանին ռեալիստորեն արտացոլելու XIX դարի 70—80 թվականների արևմտահայ իրակա-նության հասարակական-քաղաքական և կուլտուր-կենցաղային երևույթները: Ժողովրդական առականների, առածների և բանահյուսական այլ նյութերի ու արտահայտչական միջոցների տեղին ու հաջող օգտագործման միջոցով նա ավելի դիպուկ ու սուր է դարձրել հասարակական կյանքի արատները մերկացնող իր քննադատական խոսքը, առավել կենդանի ու տպավորիչ ներկայացրել այդ կյանքի երգիծական պատկերը:

2

Ժողովրդական բանահյուսության նպատակասլաց օգտագործման միջոցով Պարոնյանը թունոտ ծաղրի է ենթարկել կղերա-ֆեոդալական և բուրժուական դասակարգերի ներկայացուցիչներին՝ որպես ժողովրդի թշնամիների, պատկերել է աշխատավորության շահագործումը և կրած անլուր տառապանքները, մերկացրել է «ազգային» հիմնարկների (պատրիարքարան, դատաստանական խորհուրդ և այլն) և «ազգային ջոջերի» (զանազան ընկերությունների ու մամուլի գործիչների) հակաժողովրդական, շահադիտական ու եսամոլ գործունեությունը:

Այսպես, օրինակ, իր «Ծիծաղ» վերնագրով գրվածքի մեջ, լայնորեն օգտագործելով ժողովրդական առականների այլաբանական ձևը և նրանց մեջ հանդեպ

¹ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. VIII, հ. 7, 272—273:

² Նույն տեղում, հատ. XI, էջ 223—224:

եկող կենդանիների սիմվոլիկ կերպարներն իրենց տրագիցիոն բնութագրերով ու վարքագծով, Պարոնյանն անխնա կերպով ծաղրի է ենթարկել ու մերկացրել Ազգային երեսփոխանական ժողովը, կոչելով այն՝ «Կենդանիների մեծ ժողով», «Գորտերու ժողով» կամ «Կենդանիներու երկակենցաղ ժողով», ներսես պատրիարք Վարժապետյանին, կոչելով նրան՝ «Առյուծ», Խորեն եպիսկոպոս Նարպեին, կոչելով նրան՝ «Ազոավ», հարուստ հայերին, կոչելով նրանց՝ «Առատածեն կենդանի» և այլն: Ժողովրդական առակների նմանությամբ ստեղծված Պարոնյանի առակներում, որոնք տեղ են գտել նրա «Ծիծաղ»-ի մեջ և կրում են՝ «Մրջյուններուն բողոքագիրն», «Մուկերու հոգաբարձությունն», «Վահանաձուկին երեսփոխությունը» և նման այլ վերնագրեր, հասարակական կյանքի բացասական երևույթներն ու ուժերն անձնավորող կենդանիների, թռչունների, միջատների, սողունների հետ միասին և նրանց դեմընթաց, հանդես են բերված նաև նույն այդ կյանքի դրական կողմերն անձնավորող, ժողովրդի ձրգատումների ու շահերի արտահայտիչ կենդանիներն ու միջատները: «Ծիծաղ»-ի մեջ տեղ գտած երգիծական առակներում հանդես եկող կենդանիներից ու միջատներից, այս առումով, բնորոշ են «Մրջյունները», որոնք ներկայացված են իբրև սիմվոլ աշխատավոր ժողովրդի, և «Մեղուն», որը ներկայացնում է արևմտահայերի դեմոկրատական ուղղության օրգան համանուն երկշաբաթաթերթը, որի խմբագիրներն են եղել՝ սկզբում Նալբանդյանի արևմտահայ համախոհներից ու զինակիցներից Սվաճյանը, իսկ ավելի ուշ ինքը՝ Պարոնյանը:

Իր հուշակավոր «Ազգային ջոջեր»-ի մեջ Պարոնյանը փայլուն կերպով օգտագործել է բազմաթիվ ժողովրդական առածներ ու ասացվածքներ, վերջիններիս միջոցով ավելի ցայտուն ու առավել պատկերավոր դարձնելով իր «ջոջերից» շատերի ֆիզիկական և մասնավոր հոգեկան այլանդակությունների նկարագիրը, լրացնելով նրանց երգիծական պորտրետների մի շարք բնորոշ գծերը:

Բնութագրելով արևմտահայ հետադիմական-պահպանողական բանակի նշանավոր դեմքերից մեկին, տխրահույզ Հովհաննես Տերոյենցին, որի դեմ, Պոլսում եղած ժամանակ, գաղափարական կատաղի պայքար է մղել Մ. Նալբանդյանը, Պարոնյանն օգտագործում է «Բեռանը սրտի քարգմանն է» հայտնի ասացվածքը, գրելով. «Պատվելիին (խոսքը Տերոյենցի մասին է — Ա. Ղ.) վարդապետություններն հետևյալներն ըլլալու են. Պետք է մարգերն իրենց խոսքերեն դատել և ոչ գործերեն. և երբ մեկն ըսե մեզ, թե ես վաճառական եմ և երթա լեռներն ավազակություն ընե, պարտավոր ենք դայն իբրև պատվավոր վաճառական հարգել. վասն զի բերանը սրտին թարգմանն է»¹:

«Ազգային ջոջ» Գրիգոր Էնֆիյեճյանի կեղծ աղգասիրական դիմակը պատռելու համար, Պարոնյանը հիշեցնում է ժողովրդական առածի՝ սեփական փորի համար մուկ բռնող կատվին, գրելով. «Չենք կարող ըսել, թե այս անձն բնավ ազգասիրություն չունի, բայց միայն կը խորհենք, թե կատուն մուկը բռնելու պատրաստված ժամանակը յուր տիրոջը բարություն ընելու կը խորհի, թե՞ յուր փորը կշտացնելու»²:

«Ազգային ջոջ» Քրիստափոր Ղաղարոսյանի զոռլոգիական էգոիզմը նշանակելու նպատակով Պարոնյանը բառափոխված ձևով օգտագործում է՝ «Մեկի

¹ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 47:

² Նույն տեղում, էջ 171:

մոռումբ կրակ ընկել է, մեկելը կասի կեցիւ մոխս վառեմ» ժողովրդական հայտնի առածը, գրելով. «Ազնվապետության թշնամի է, թեպետ և ժողովրդյան ալ շատ բարեկամ չէ: Յուր կիրքերն այնչափ ծայրահեղության կը տանին զինքն, որ մեկ անձե վրեժ լուծելու համար, այն անձին բնական քաղաքը կրակի կուտա, և յուր նարկիլեին հարմար կրակ կը փնտռե այնտեղ»¹:

Այսպես և մի շարք ուրիշ դեպքերում («Ազգային ջոջեր» Տիգրան Յուսուֆյանի, Հարություն Մերեյեմ Գուլիի և մյուսների երգիծական պորտրետները գծագրելիս)²:

70—80-ական թվականների արևմտահայ և արևելահայ ոեակցիոն-պահպանողական և լիբերալ-բուրժուական մի շարք գործիչների հասարակական և անձնական դիմանկարի այս կամ այն բացասական կողմը ծաղրելու համար, Պարոնյանը հաջողությամբ օգտագործել է նաև տվյալ անձնավորության կամ կերպարի հասարակական գործունեությունը, նրա ներքին աշխարհն ու բնավորության գծերը, նրա արտաքին, ֆիզիկական հատկությունների նկարագրման միջոցով բացահայտելու արտահայտչական միջոցը, որը ժողովրդական բանահյուսության սիրված ու տարածված արտահայտչական միջոցներից մեկն է: Գեղարվեստական տիպականացման տվյալ ձևը ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ լայնորեն կիրառվում է և՛ դրական, և՛ մանավանդ բացասական կերպարների բնութագրման ժամանակ: Վերջին դեպքում այն մեծ մասամբ կրում է երգիծական (հումորական կամ սատիրական) բնույթ: Բնորոշ են այս տեսակետից Մսրա Մելիքի և Կոզբազնի նկարագրությունները հայ ժողովրդական էպոսում («Սասունցի Դավիթ»), ինչպես նաև նմանօրինակ բազմաթիվ նկարագրություններ մյուս ժողովուրդների էպոսներում, հեքիաթներում, երգերում և այլն:

Քննության առարկա արտահայտչական միջոցը Պարոնյանն օգտագործել է՝ Ստեփան Ասլանյանի, Համբարձում Իփեկճյանի, Գրիգոր Արծրունու և մի քանի ուրիշների երգիծական պորտրետների մեջ: Ահա թե ինչպես է նա ծաղրել վերոհիշյալ գործիչներից յուրաքանչյուրին:

Ստեփան Ասլանյանի մասին: Ստեփան բաշա վայելուչ հագուստով, միջին հասակով, միջին գերությանմբ գեղեցիկ մարդ մ' է «... Ամեն անգամ որ տեսած եմ զինքը երեսփոխանական ժողովո առննապետական աթոռի վրա՝ կարծած եմ, թե լուծողական դեղ խմած է, որ մոտ է յուր արդյունքը ցցունելու»³:

Գրիգոր Արծրունու մասին: «Պ. Արծրունվո կազմը նույն ուղղությունն ունի, ինչ ուղղություն ունի Մշակը, և անշուշտ փառք մ' է իրեն, եթե ոչ Մշակին մեջ, գոնե յուր անձին վրա Սզորոսն ներկայացնելը»⁴:

Համբարձում Իփեկճյանի մասին: «Փողոցի մեջ այնպիսի սիգաճեմ քալվածք մ' ունի, որ մարդս կը վախնա անոր ետևեն երթալու, իրեն սպասավորն կարծվելու համար»⁵:

Նույն նպատակով Պարոնյանն օգտագործել է նաև մի ուրիշ արտահայտչական միջոց, որը դարձյալ գալիս է ժողովրդական բանահյուսությունից և սերտորեն կապված է ժողովրդական մտածողության հետ: Ունկնդրի ուշադրու-

¹ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 163:

² Նույն տեղում, էջ 28, 88:

³ Նույն տեղում, էջ 40:

⁴ Նույն տեղում, էջ 155:

⁵ Նույն տեղում, էջ 187:

թյունը որևէ նշանավոր դեպքի կամ դեմքի նկատմամբ սրելու և լարում առաջացնելու համար, ժողովրդական վիպասանները, սովորաբար, սիրում են այն կապակցել բնության կամ հասարակական կյանքի այս կամ այն արտակարգ երևույթի (երկրաշարժ, կայծակ, սով, պատերազմ) հետ: Հիշենք իբրև օրինակ առասպելական Վահագնին, որի ծննդյան ժամանակ, ինչպես հայտնի է, երկնում են նաև երկիրն ու երկինքը: Հիշենք Հայկին ու Դավթին, որոնց մենամարտի ժամանակ զղրգում է երկիրը և շարժվում են լեռները, և բազմաթիվ ուրիշ օրինակներ, ինչպես հայ, այնպես էլ մյուս ժողովուրդների բանավոր ստեղծագործությունից:

Հետևելով ահա ժողովրդական վիպասանների այդ օրինակին և յուրովի օգտագործելով նրանց ստեղծագործական հիշյալ պրիոմը, Պարոնյանն իր «Ազգային ջոջերի» մասին խոսելիս, վերջիններիս ծնունդը կամ հասարակական որևէ քայլը, կապում է այս կամ այն արտակարգ բանի հետ, ստեղծելով կենդանի, պատկերավոր ու սուր երգիծական դոյավիճակներ ու նկարագրություններ:

Այս տեսակետից առանձնապես ցայտուն են արևմտահայ երեք մոլի ռեակցիոն գործիչների՝ Խորեն Գալֆայանի, Հովհաննես Տերոյենցի և Անտոն Հասունյանի երգիծական պորտրետների համապատասխան տեղերը: Ահա թե ինչ է պատմում նրանց մասին Պարոնյանը:

Խորեն Գալֆայան: «Խորեն եպիսկոպոս, աստվածաբան, կատակերգակ, ազգային երեսփոխան, բանաստեղծ, 1861-ին Գալֆայան, 1870-ին Նարայեյ, 1879-ին Լուսինյան — մինչև նոր տնօրինություն — ծնավ Կ. Պոլիս, Սամաթիո թաղին մեջ, 1841 թվականին: Ծնած գիշերը երեք տեղ հրդեհ պատահեցավ. Արևավուտ դեղ, Ախրրգարու և Գասրմ-Բաշա»¹:

Հովհաննես Տերոյենց: «Հովհաննես Տերոյենց կամ Հովհաննես Պատվելի կամ Պրուսացի Հովհաննես կամ Հովհաննես Տեր-Կարապետյան կամ Չամուռճյան Հովհաննես, օգնական Պետրոս Առաքյալին, աստվածաբան, մատենագիր, փաստաբան դեբրու, լեզվագետ, մաթեմատիկոս, խմբագիր, դասատու, կրիտիկոս, ծնած է անցյալ դարուն վերջերը, Պրուսացի գյուղերեն մեկուն մեջ: Յուր ծննդյան հետևյալ գիշերը ծնան դեբրն, որոնց գոյությունն այն թվականեն ի վեր հաստատված ճշմարտություն մ' է»²:

Անտոն Հասունյան: «1818 թվականին ծնավ Անտոն Հասունյան, կաթողիկոս հռովմեական այն հայերուն, որոնք նախապատիվ կը սեպեն իրենց ազգային իրավունքներն ս. Պապին հողաթափներուն մեջ տեսնել, քան թե իրենց ձեռներուն մեջ: Յուր ծննդյան գիշերն ամեն մարդ սկսավ իրարու հարցնել, թե ինչո՞ւ գիտավոր աստղ չերևեցավ, վասն զի նախնիք գիտավորներն շարագուշակ նշան համարելով՝ կը հավատային, թե նախ գիտավորը կուգա և ապա փորձանքը»³:

3

Ժողովրդական բանահյուսությունը հաջողությամբ ծառայել է Պարոնյանին սուլթանական Թյուրքիայի և իմպերիալիստական պետությունների դեմ մղած

¹ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 13:

² Նույն տեղում, էջ 40:

³ Նույն տեղում, էջ 98:

ներա քաղաքական բնույթի սուր պայքարի մեջ: Ժողովրդական ավանդու-
թյունների, առակների, առածների տեղին ու դիպուկ օգտագործումով, բանա-
հյուսական բնույթի զանազան անալոգիաներով ու ալեգորիաներով, մեծ եր-
գիծաբանը լայն մասսաների համար ավելի մատչելի ու ներգործոն է դարձրել
իր քննադատական խոսքը, առավել նպատակասլացություն հաղորդել իր սա-
տիրային:

Պարոնյանը անողոք ծաղրի է ենթարկել ֆեոդալական Թյուրքիայում տի-
րող բռնակալական ռեակցիոն ռեժիմը, որի ղոհն են դարձել մի շարք փոքր
ազգություններ և առաջին հերթին հայ ժողովուրդը: Նա մերկացրել է Թյուրքա-
կան ասիմիլատորների վարած քաղաքականության գիշատիչ նպատակները՝
ստրկության մեջ պահելու հայերին և ամեն կերպ աշխատելու բնաջնջել նրանց
երկրի երեսից: Բնորոշ է այս տեսակետից «Կսմիթների» մեջ անալոգիայի հա-
մար օգտագործված հետևյալ ավանդությունը, որի օգնությամբ Պարոնյանը
ակնարկել է սուլթանական յաթաղանի տակ հեծող հայ ժողովրդի ծանր գոյա-
վիճակը: «Կրսվի թե Դարատաղի ժողովրդյան մեջ ավանդություն կա, թե աստ-
ված աշխարհս ստեղծած ժամանակ՝ լեռները պարկի մեջ լեցուցած՝ աշխարհի
ամեն կողմը կը ցանե եղեր, հանկարծ պարկին հատակը պատռելով՝ մեջը
մնացած լեռներուն ամենն ալ Դարատաղի երկրի վրա թափեր են... Մենք ալ
կըսենք թե, արդյոք Նախախնամությունն Ադամ Նախահոր մեղացն ի պատիժ
աշխարհի վրա ցավերն ու վիշտերը ցանած ժամանակ՝ պարկին հատակը պատ-
ռելով մեծ մասն Հայաստանի վրա թափեր է»¹

Պակաս բնորոշ չէ «Ասկե-անկե»-ի մեջ օգտագործված հետևյալ Թյուրքե-
րեն առածը, որ հիշում է Պարոնյանը Թյուրքական գրաքննության կողմից հայ
գրականության ու մամուլի նկատմամբ ցուցաբերվող քմահաճ ու բուրժուա-
նությունը ծաղրելու համար: «... այս հարվածն (խոսքը տպագրական տեսչու-
թյան կողմից «Ռատրոն»-ը դադարեցնելու կարգադրության մասին է, որ ար-
վել է գավառում տիրող ծանր դրության մասին, Մուշից ստացված նամակը սև
գծերի մեջ առնելու համար — Ա. Ղ.) մեզի այնքան դառն երևցավ, որ մինչև
այսօր ուր որ սև գիծ մը կը տեսնանք կոր նե հազար մղոն հեռուեն կը քալենք
կոր և աս ալ, բնական է, կեռզ կեորտյուլյինտեն գորգար (աչքը տեսածից է
վախենում) կըսե տաճկական առածը»²

«Հոսհոսի ձեռատետր»-ի մեջ Պարոնյանն անալոգիայի կարգով օգտագոր-
ծում է փոքր հասակում իր կարդացած առակներից մեկը, վերջինիս միջոցով
մերկացնելով ու ծաղրելով Թյուրքական կառավարության կողմից հայկական
հարցի լուծման կապակցությամբ ցուցաբերվող խորամանկ դանդաղկոտությու-
նը: «Հայկական խնդիրն յուր կարգին կսպասե, որ լուծվի: Նախ Գարատաղի
խնդիրն պիտի լուծվի, ետքը Հունաստանի խնդիրն և վերջը Հայաստանինը:

Պղտիկության առակ մը կարդացած եմ՝ չդիտեմ ո՛ւր: Այս առակն կը
պատմե, թե վարժապետին մեկը տղու մը ձեռքը քերական մը տալով՝ կը հրա-
մայե անոր, որ այլ մը ըսե: Տղան այլ չըսեր: Վարժապետը երկու շաբաթ շա-
րունակ կաշխատի աշակերտին այլ մը ըսել տալու և չհաջողիր: Երբ պատճառը
կը հարցվի տղուն՝ սա պատասխանը կը տրվի, թե եթե այլքն ըսեմ՝ ետևեն:

¹ Լ. Պարոնյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. VIII, էջ 21:

² Եռյն տեղում, հատ. XI, էջ 40:

բենն, գիմն, դան և մինչև և, օֆ ըսել պիտի տաք ինձի, ուստի անոր համար ալբը չեմ ըսեր, որ մյուս գիրերն ալ ըսելու չստիպվիմ:

Մեր կառավարությունն ալ շուգեր Դարատաղի խնդիրը լուծել, որպեսզի մյուսներն ալ լուծելու չստիպվի»¹:

Նույն կերպ Պարոնյանը քաղաքական ոչնչացնող սատիրայի առարկա է դարձրել նաև իմպերիալիստական պետություններին: Վարպետորեն օգտագործելով Ժողովրդական բանահյուսության տարբեր տիպի ստեղծագործություններն ու ստեղծագործական հնարները, մեծ երգիծաբանը մերկացրել է նրանց գիշատիչ ձգտումները և կեղծավոր ու շողոքորթ դիվանագիտությունը:

Խոսելով Անգլիայի, Գերմանիայի և ցարական Ռուսաստանի ուրիշ երկրների նկատմամբ ունեցած քաղաքական նկրտումների մասին, Պարոնյանը մեջ է բերում «Ամեն մարդ իր Կարապետը կուլա» ժողովրդական հայտնի առածը, դրանով իսկ սրամտորեն բացահայտելով նրանց այդ նկրտումների էգոիստական բնույթը: «... Լորտ ի ըսրլ² Թուրքիո բարեկարգվելուն կը փափակի եղեր և ոչ թե Ռուսիո Պոլսո տիրապետելուն:

Լորտ Կլատըսթընը³ Պուլղարիո անկախությունը կը փափակի եղեր:

Պիզմարքն⁴ ալ աս անցած դարձած բաներեն օգուտ մը քաղել կը փափակի եղեր:

Բրենս Կորչաքովը⁵, իբրև արտաքին գործոց պաշտոնյա Հիսուսի, Քրիստոնեից աղեկ վիճակ ունենալուն կը փափակի եղեր, առանց Հայաստանի քրիստոնյաներուն նայելու, «ինչպես հայտնի է, ամեն մարդ իր Կարապետը կուլա կոր...»⁶:

Մի ուրիշ անգամ, բերելով արջի ու երեխայի մասին ժողովրդական առակի շատ սրամիտ անալոգիան, Պարոնյանը թունոտ ծաղրի է ենթարկում Անգլիայի թագուհու կողմից դիվանագիտական նպատակներով արվող կեղծ սպառնալիքները: «... Անգղիո թագուհվույն սպառնալիքներն ալ կը հիշեցնեն մեզ այն առակը, որ մայր մը յուր տղուն կրսեր. «Եթե այսպես շարունակ լաս՝ արջուն կուտամ զքեզ, խելքդ գլուխդ ժողվե»:

Արջ կը լսե այս խոսքը և մինչև իրիկուն դրան առջև անոթի կսպասե, որ տղան լա ու մայրը զայն յուր առջև նետե:

Տղան կուլա, արջը կուրախանա, բայց վերջապես իր խաբված ըլլալը իմանալով, ձայնը կը քաշե և մեծ տրտմությամբ ետ կը քաշվի»⁷:

Մի երրորդ տեղ, հիշատակելով «Քիչ խոսիր ու շատ մտիկ ըրե» հայտնի ասացվածքը, Պարոնյանը ծաղրել է եվրոպական պետությունների դեսպանների համար գործունեության ու բնավորության ոճ դարձած ստախոսությունն ու ուրացողությունը: «Ժամանակով իմաստասերին մեկը ըսած է. «Քիչ խոսիր ու շատ մտիկ ըրե»:

... Այդ խոսքը շատ իրավացի խոսք մըն է, որովհետև շատ խոսողները բան մալ չեն խոսիր, ամենեն շատ խոսողներն ամենեն քիչ խոսողներն են:

1 Լ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 108:

2 Անգլիական պետական գործիչ:

3 Անգլիական իրերալիստների պարագլուխը:

4 Պրուսական հայտնի միլիտարիստ:

5 Ցարական դիվանագետ:

6 Լ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. X, էջ 145—146:

7 Նույն տեղում, հատ. VIII, էջ 12—13:

ասիկա այնքան հայտնի ճշմարտություն մ'է, որ դեռսպան մ'անգամ չկրնար ուրանալ»¹։

Պարոնյանի ուշադրությունից չի վրիպել նաև եվրոպական պետությունների դիպլոմատիկական լարախաղացությունների ցայտուն դրսևորումն հանդիսացող Բեռլինի տխրահռչակ վեհաժողովը, որի նիստերին, ինչպես հայտնի է, տարիներ շարունակ, դիվանագիտական առ ու ծախի առարկա է դարձել «հայկական հարցը»։ Օգտագործելով ժողովրդական առակների այլաբանական ձևը և նրանց գործող անձ կենդանիներին, մեծ երգիծաբանն իր «Ծիծաղ»-ի մեջ ոչնչացնող ծաղրի է ենթարկել հիշյալ «վեհաժողովը», կոչելով այն՝ «Կենդանիների ավագաժողով», որի մասնակից իմպերիալիստական պետությունները նրա կողմից հանդես են բերված փղի (Անգլիա), սոխակի (Իտալիա), սիրամարգի (Ֆրանսիա) և մի երկու ուրիշ կենդանիների դիմակի տակ²։

4

Պարոնյանի քննադատական ռեալիզմի գործողության ոլորտներից մեկն էլ հանդիսացել են ժամանակակից բարքերն ու կենցաղային երևույթները, որոնց ցուցադրման համար նա նույնպես օգտագործել է ժողովրդական բառ ու բանը։ Մեջ բերելով որևէ առած, առակ կամ ասացվածք, մեծ երգիծաբանը, այն՝ միջոց կամ առիթ է դարձրել մերկացնելու բուրժուական կենցաղն ու քաղաքակրթությունը, վերջինիս այլասեռված բարքերն ու ընտանիքը։

Պարոնյանը հատկապես սուր ծաղրի է ենթարկել օտարամոլությունը և ժամանակակից բարձր խավի կանանց՝ նորաձևությունների գերի լինելու հանգամանքը, ցույց տալով այն վատ հետևանքները, որ ունենում են այդ արատներն ինչպես առանձին անհատների, այնպես էլ ողջ հասարակության կյանքում։

Հիշեցնելով ընթերցողներին լաֆոնտենի կողմից մշակված ժողովրդական հայտնի առակը գորտի մասին, Պարոնյանը գրում է. «Դժգոհություն կը հայտնեմ այն կնոջեն, որ իր ամուսնույն վիճակին շուգելով տեղեկանալ, զայն և ինքնին միանգամայն կսպանեն, առանց խրատվելու լաֆոնտենի գորտեն, որուն մահվան պատճառն ալ իմ կարծիքովս կնիկներն ըլլալու են, որք շատ օրինակ տված են անոր, այլոց պես մեծ ըլլալու անմտության մասին»³։

Քննադատելով բուրժուական կարգերի ծնունդ կենցաղային այլանդակությունները՝ մոդան, կանանց պճնասիրությունը, շռայլությունները և այլն, Պարոնյանը, հավատարիմ իր դեմոկրատական հայացքներին, քարոզել է ազնիվ աշխատանքի վրա հիմնված պարզ կենցաղավարությունը, դրվատել է կանանց աշխատասիրությունը և այլն։

Օգտագործելով «Ժիր կնիկը տուն կը շինեն» տարածված ասացվածքը, Պարոնյանը գրում է. «Ո՛վ կանայք, կարևորություն մի՛ տաք վաղանցուկ գեղեցկության, դուրաշեջ փառաց և անցավոր հաղթանակաց։ Աշխատեցեք ձեր պարզասիրությամբ սրտի, հոգվո, բարուց և զգեստուց օգտակար և սիրելի ըլլալ։

¹ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 9։

² Նույն տեղում, հատ. V, էջ 26—28։

³ Նույն տեղում, հատ. VI, էջ 27։

Ժրաջան կին մը տուն կը կանգնի (կարծեմ ասոր նման բան մը կըսես Սողոմոն իմաստուն)։ քիթ մը կոկիկ պահելու համար տուն կործանելը մեղք է»¹։

Իր կենցաղագիտական ըմբռնումները բացահայտելու համար Պարոնյանը մի ուրիշ անգամ մեջ է բերում «Պանիր հացին, պարզ երեսիկ» ժողովրդական հայտնի ասացվածքը, կոչ անելով՝ հետևելու աշխատավորության ծոցում ստեղծված այդ ասացվածքի ազնիվ ու իմաստուն խրատին²։

5

Ժողովրդական բառ ու բանի ստեղծագործական ակտիվ յուրացման փայլուն օրինակներ են Պարոնյանի բազմաթիվ առածատիպ թեմատիկ խոսքերն ու աֆորիզմները։ Հիանալի ծանոթ լինելով ո՛չ միայն հայ, այլև տաճկական ժողովրդական առածներին ու ասացվածքներին և ըստ ամենայնի բարձր գնահատելով դրանց բովանդակության և արվեստի արժանիքները, Պարոնյանը վերջիններիս հետևողությամբ ստեղծել է սեփական թեմատիկ խոսքերն ու աֆորիզմները, որոնք ժողովրդական առածների ու ասացվածքների նման աչքի են ընկնում իրենց հակիրճությամբ ու ներգործոն մեծ ուժով, քիչ բառերով շատ բան ասելու կարողությամբ, պատկերավորությամբ, բնութագրումների դիպուկությամբ ու գունեղությամբ։

Պարոնյանի ստեղծած թեմատիկ խոսքերի լավագույն նմուշները, որոնք գրքի կամ բեմի միջոցով մտել են ժողովրդի մեջ և ձեռք բերել լայն մասսայականություն, իրենց բովանդակությամբ բավական բազմազան են։ Դրանք շոշափում են նույն հարցերն ու թեմատիկան, ինչ և հեղինակի երգիծական բոլոր մյուս գործերը։

Շահագործող դասակարգերի գիշատիչ էությունը բացահայտելու, աշխատավոր ժողովրդի և նրա ծոցից դուրս եկած մտավորականության շարքաշ վիճակը ցույց տալու, այսպես կոչված «ազգային» հիմնարկների ու նրանց պարզուխների հակաժողովրդական արարքները նշավակելու համար, Պարոնյանն ասում է.

«Մեծ վաճառական մ' էս — ավելորդ է ըսել, թե մեծ խաբեբա մ' էս»³։

«Ինչ որ ախտ է աղքատի համար՝ անմեղ զրոսանք կը համարվի հարուստի համար»⁴։

«Կինն շինականներու մեջ՝ միայն օգնական է յուր էրիկին, միջակ մարդերու մեջ՝ բեռ և ազնվականներու մեջ՝ պատիժ»⁵։

«Իրավ է, որ շատ աղքատներ առանց բժշկի կը մեռնին. բայց որչափ բժիշկներ ալ կան, որ առանց հիվանդի կը մեռնին»⁶։

«Անոնք որ դրքով կ'զբաղին, թշվառությամբ կ'զբաղին»⁷։

«Ամեն բաժակ առաջարկող կուզե, որ յուր բաժակն ժողովրդյան կենացն խմվի, թեև շատ անգամ ժողովուրդն կը խմվի առաջարկողին կենացը»⁸ և այլն։

¹ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. VI, էջ 18։

² Նույն տեղում, հատ. XI, էջ 68։

³ Նույն տեղում, հատ. I, էջ 128։

⁴ Նույն տեղում, հատ. IV, էջ 147։

⁵ Նույն տեղում, էջ 130։

⁶ Նույն տեղում, էջ 48։

⁷ Նույն տեղում, հատ. I, էջ 74։

⁸ Նույն տեղում, հատ. V, 265։

Ֆեոդալական Թյուրքիայի բռնակալական ռեժիմը և իմպերիալիստական պետությունների հակահումանիստական քաղաքականությունը խարազանելու համար Պարոնյանն ասում է.

«Տաճկաստանի մեջ բանտ... բանտի մեջ բանտ»¹

«Մարդասիրությունը քաղաքականության մեջ... Անմեղություն փնտրել է սատանայության մեջ»² և այլն:

Բուրժուական աշխարհում տիրող կենցաղային հարաբերություններն ու երևույթները (սեր, ամուսնություն, սիրահարների և ամուսինների փոխադարձ կապ և այլն) քննադատելու ու ծաղրելու համար, Պարոնյանն ասում է.

«Դրամոսթիտն ուրիշ բան չէ, եթե ոչ ստակով ամուսին մը ծախու առնել»³:

«Անհավատարիմ ամուսնություններու մեջ էրիկն անուն է, իսկ սիրականը՝ դերանուն»⁴:

«Կիներն ավելի հաղուստով կը սնվին, քան թե հացով»⁵:

«Ամոթը կանանց առաքինության ամենեն ավելի հավատարիմ պահապանն է երբեմն» և այլն:

Քիչ չեն թվով նաև Պարոնյանի ստեղծած այն առածատիպ թեալոր խոսքերն ու լակոնիկ աֆորիզմները, որոնց միջոցով նա արծարծել է հասարակական, բարոյական, էսթետիկական և այլ հարցեր, խրատել մարդկանց լինել համեստ, խիզախ, ինքնուրույն, պարզ և ճշմարտասեր: Հիշենք դրանցից մի քանիսը միայն:

«Մոլություններու վրա ծիծաղելն առաքինության ճամբուն մեջ գտնվիլ կենթադրե»:

«Թերություններու վրա լալն թերություններու մեծադուլնն է»:

«Ամեն բանին նմանիլ փափակողն, բանի մը չկրնար նմանիլ»:

«Սխալն ճանաչելը խելացություն է, իսկ զայն խոստովանիլն՝ մեծ քաջություն»:

«Ծանրերը միշտ գետնաքարշ կը մնան և թեթևները վեր կելնեն»:

«Ճաշակի խնդրոց մեջ ճշմարտությունը միշտ ծակամուտ կը պահվտի»:

«Պարզությունն և ճշմարտությունն այնպիսի գեղեցկություններ են, որ ամեն բանի մեջ կը փնտովին, ամեն բանե առաջ» և այլն:

Ժողովրդական բանահյուսության և ընդհանրապես ժողովրդական բառ ու բանի շեշտված առակայությունը Պարոնյանի ստեղծագործության մեջ միանգամայն օրինաչափ երևույթ է: Այն պայմանավորված է մեծ երգիծաբանի ստեղծագործության խորը ժողովրդայնությամբ և քննադատական առողջ ոեալիզմով: Հիանալի կերպով զգալով ժողովրդական բանահյուսության լայն մասսաների վրա ունեցած իդեական և էմոցիոնալ ներգործման հզոր ուժը, Պարոնյանն իր գրվածքների մեջ լայն տեղ է տվել նրա լավագույն նմուշներին, վարպետությամբ օգտվել ժողովրդի ստեղծագործական դարավոր փորձից: Անժրխտելի փաստ է ժողովրդական բանահյուսության դրական դերը Պարոնյանի երգիծանքին է՝ լավելի ժողովրդայնություն և ազգային երանդ հաղորդելու և նրա քաղաքական սատիրային հատուկ սրություն տալու գործում:

¹ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. IX, էջ 137:

² Նույն տեղում, հատ. VIII, էջ 91:

³ Նույն տեղում, հատ. V, էջ 147:

⁴ Նույն տեղում, էջ 129:

⁵ Նույն տեղում, էջ 85: